

կով և կազմով զարդարեցի զ(ս)ա. ընդ նմին և զպարօն Ամիրդովլաթն բժիշկն որ արդար ընչիւք զարդարել ետ զսա թիւ. ԶԼԹ:

Պօլսում բժշկապետ Թորգոմեանը, հայ բժշկարանների արգիւնաւոր աշխատասիրողը ինձնից լսելով այդերկու ձեռագրերի մասին խնդրեց հարկաւոր տեղեկութիւնը հաղորդել: Կատարելով նրա ցանկութիւնը. կանխեցի ի լոյս ածելու այս յիշատակարանները յուշագրութիւն բանասէրների:

Մեսրոպ Վարդապետ

ՍՆՈՏԻԱՊԱՇՏՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՒ ՀԱՒԱՏԱԼԻՔՆԵՐԸ ԳԻՒՂՈՒՄ *)

Իմ հաւաքած միւս հաւատալիքները և անտիապաշտութիւնները կարելի է երեք կարգի բաժանել. այսպէս՝ բժշկական, կենսադական և կրօնական: Բժշկական հաւատալիքներից ամենաշատը վերաբերում են Դող էրոցքին: Օրինակ.

1. Մաղկազարդին օրհնած ուռի ճիւղը եթէ տնկեն ու կաշի ծառ դառնայ, էրոցքը կը կտրի: Հարկաւոր է հիւանդի շորի ծլանքներից մի կտոր կապել այդ ծառի ճիւղերին:

2. Եթէ հիւանդը կամուրջի տակով անցնի երեք անգամ էրոցքը կը կտրուի,

3. Հիւանդի ծոցը դնում են մի կտոր բամբակ: Երբ պատարագ է լինում գիւղում՝ բամբակը տալիս են պատարագիչ քահանային, նա պատարագի ժամանակ այդ բամբակից թել է ոլորում, որը կապում են հիւանդի թեր և հիւանդը առողջանում է:

4. Հիւանդի երկարութեամբ թել են հալում և դնում մի նոր մեռած մարդու ծոցը: Հաւատում են, որ այդ միջոցը կտրական է. հիւանդը կամ կը մեռնի, կամ կառողջանայ:

5. Հիւանդի երեսը կամ ձեռները լուանում են սպանուածի կամ խեղդուածի գերեզմանի վրայ և ինչ ամանով որ ջուր են լցրել, կտրում են խիւղով նոյն գերեզմանաքարին:

6. Փողոցի լայնութեամբ և մի երկու արշին բարձրութեամբ թել են կապում գիշերը: Ի հարկէ առաջին անցկացողը անգիտակցաբար կտրում է թելը սորանով և կտրում է դող—էրոցքը:

*) Տես Արարատ № 4, 5—6

7. Դող—էրոցքը կամ առհասարակ ծանր հիւանդութիւնները բժշկելու համար երեք ճանապարհի միացման տեղում մի աւելի վրայ լողացնում են հիւանդին, ի հարկէ գիշերը: Հաւատում են որ ով այդ աւելը վերցնի տուն տանի ցաւն էլ նրան կանցնի:

8. Գիշերները ծւայող մի թռչուն կայ, հիւանդի տէրը այդ թռչունի ծւայը լսելիս՝ իւրաքանչիւր մի ծւայի հետ մի կապ է տալիս թելի վրայ՝ ասելով, «Այս ինչի էրոցքի գեղն ըլի» և այսպէս երեք անգամ: Հիւանդութիւնն անցնում է:

9. Գիշերները էրացնողի համար, հիւանդի տէրը գիշերը ման է գալիս եօթն տուն և իւրաքանչիւրում ասում է. «մեր հիւանդի գեղն ինչն է»: Ամեն տանից մի մի ուտելու բան են տալիս, հիւանդը այդ բաները ուտում է և առողջանում է:

Բացի սրանցից շատ գիւղերում յատուկ դող—էրոցքի աղբիւրներ կան, որոնց ջուրը սուրբ և բժշկարար է համարւում: Այդպիսի աղբիւրները առանձին երկիւղածութիւն են ազդում և նրանց ջուրը կամ չրջակայքը ապականելը մեղք է համարւում:

Կարմրուկ հանած երեխաների մայրերը մեղք են համարում լուացք և կար անելը: Հաւատում են, որ լուացք եթէ անեն երեխայի կաշին կը մոմռայ, իսկ կարելիս նրա վէրքերը կը ծակծկուեն:

Վախից առաջացած հիւանդութիւնից ազատելու համար դիմում են հետեւեալ միջոցներին:

1. Հիւանդին պարկեցնում են մէջքի վրայ, սպիտակ կամ կարմիր շորով ծածկում: Շորի վրայից մարգամի բարակ են շաւրում և կրակում են:

2. Հիւանդը գնում է այնտեղ, որտեղ վախնցիլ է. ձեռքերը և ոտքերը լուանում է և մի մեխ ամրացնելով գետնին՝ ասում է. «առ քոնը, տուր իմը»:

3. Վերցնում են մի աման ջուր եօթը դրան չղթայ խաչածն գցում են մէջը. գիշերը այդ ջուրը «աստղունք» են գնում, այսինքն յարմարացնում են մի այնպիսի տեղ, որ աստղերը ցոլան մէջը, և առաւօտը խմացնում են հիւանդին:

4. Ջրի մէջ լուծած «քարի ուղեղ» են խմացնում հիւանդին: Քարի ուղեղ ասելով հասկանում են լեռ քարի մէջ երբեմն պատահող դեղնագոյն փխրուն դանդուածը:

5. Հիւանդին, առանց իր գիտութեան, խմացնում են իր մէզը:

6. Աղօթում են: Վերցնում է աղօթողը հիւանդի թաշկինակը եթէ աղջիկ է կամ գօտին եթէ տղայ է, կիսակապ է անում, յետոյ քանդում է արած կապը և հետը ասում. «սիրտ խախտել ես, տեղն արի»: Բժշկութեան այն շնորհքը «տուածուրիկ» է համարւում:

7. Վախի մի տեսակն է «հրեշտակակոխ» լինելը: Երբ մի ե-

րեխայ, առանց մաշուելու, ռոտների ամբողջիւնը կորցնում է յանկարծ, կամ մեծերը հիւանդանալով՝ առանց պատճառի մի տեսակ անորոշ երկիւղ են զգում, այնպէս որ դիչեր ժամանակ դժուարանում են մինակ մնալ կամ դուրս գալ՝ այդպիսի հիւանդի մասին ասում են հրեշտակակոխ է եղել: Այդ բանը ստուգելու համար «մոմ են թափում»: Սրա համար վերցնում են եկեղեցուց կիսավառ մոմի մի կտոր, նրա հետ խառնում են բաւականաչափ մեղրամոմ, հիւանդին պարկացնում են մէջքի վրայ երեսը դէպի արեւելք և սպիտակ սաւանով ծածկում են ամբողջապէս, յետոյ վերցնում են մի աման ջուր, այդ ամանով խաշակնքում են հիւանդի վրայ երես անգամ և ասում. «Անուն չոր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, Տէր Աւարիչ Քո ձեռն ա իմը չի, Դու ես տուել ես չեմ տուել, Քո ցաւն ա իմը չի, Դու ազատես, Դու փրկես»: Ամանով ջուրը դնում են հիւանդի կրծքին: Զեռքի տակ պատրաստ լինում է կրակով կարմրացրած ակիչը — խմորի տաշտը քերելու երկաթեայ գործիքը: Ակիչով էլ երես անգամ նոյն խոտքերն անելով խաշակնքում են հիւանդի վրայ: Ետոյ ակիչը պահում են հիւանդի կրծքի վրայ դրած ամանի ջրի վրայ, մոմը դնում են ակիչի վրայ, որը հալուելով լցւում է ջրի մէջ: Մոմը հալելիս ասում են մտքներումը նախ «Հայր մեր» և յետոյ հետեւեալ աղօթքը. «Քրիստոս Աստուած, Մայր Աստուածածին, Դրիգոր Լուսաւորիչ, սուրբ Կարապետ, ս. Գէորգ, ս. Յովհաննէս, ս. Սարգիս, Անանիա առաքեալ, տան երկու դաս հրեշտակ, կուսանաց, ճգնաւորաց, որքան որ աղօթք ունեն, ինքը փրկի, ինքն ազատի»: Հալուած մոմը ջրի մէջ փուռում է ու ամբանում: Վերցնում են տափակած մոմը բռնում լոյսի առաջ ու դիտում — վախի պաճառը այնտեղ նկարուած է լինում, եթէ երևում է դազաղ ննջեցեալը մէջը, հրեշտակները գլխով խափերը, անկասկած է որ հրեշտակակոխ է եղել, եթէ ուրիշ բան է երևում, կը նշանակի ուրիշ բանից է վախեցել, և եթէ ոչինչ չի երևում պարզ է որ հիւանդը վախից չի հիւանդացել: Մոմ թափելը ծառայում է իրրեւ ստուգութիւն և իրրեւ բժշկութիւն: Հիւանդի ձեռները, երեսը և կուրծքը նոյն ջրով լուանում են իսկ մոմը պատանում են ու տանում գերեզմանատուն և սկզբից համարելով վեց գերեզման եօթերորդում թաղում են: Ծնորհքը «ստուածուրիկ է»:

8. Վախը ստուգելու համար ուրիշները «թիղ են չափում» այնպէս ասում են Հայր մեր» և աւելացնում. Հաւը թափին, Ժիտը ծառին, վախեցողի սիրտը փորին, վախեցել է երկարես, չի վախեցել — կարճանաս: Այս չնորհքը նոյնպէս «ստուածուրիկ» է: Վախ չափողները հաւատացնում են, որ երբ նրանք աջ ձեռքով թիղ են չափում ձախ ձեռքի մատներով ծայրից սկսած դէպի արմուկը և յետ, և եթէ հիւանդը վախեցել է՝ մի աներեւոյթ զօրութիւն

Նրանց մատները չուում է որ երկարի թիզը, թիզը չափում են երեք անգամ:

9. Երբ մէկին «աչքով են տալիս» և հիւանդանում է, կամ այլ խօսքով «նիաթում են», նրան բժշկելու համար վերցնում են ծածկաբար աչքով տուողի շորից և վառում են հիւանդի տակը:

10. Կամ խմորից աստամով կտրում են մի կտոր, գնտակ չի նում, երեք անգամ «չար փուչ, չար աչք» ասելով ասեղով ծակծակում գցում են հացի թոնիրը: Խմորի գունտը թոնրում պայթում է և եթէ պատահում է մի կտորը գուրս է թռչում թոնրից ջրի մէջ լուծում ու հիւանդին են խմացնում:

11. Նիաթումին—աչքով տուածին աղօթում են այսպէս: Առաջ ասում են «Հայր մեր...» և յետոյ այս աղօթքը, «Ամենափրկիչ, քո ձեռքով եմ անում, Լուսաւորիչ, քո ձեռքով եմ անում, Դարալազեազու ս. Խաչ, քո ձեռքով եմ անում, ս. Գէորգ, քո ձեռքով եմ անում, Մայր Աստուածածին, քո ձեռքով եմ անում, Յագով Նարեկացի, քո ձեռքով եմ անում, Միրաքի տան Աւետարան, քո ձեռքով եմ անում»: Այդ ժամանակ աղօթողի ձեռքում լինում է դանակ կամ ասեղ, որ յետոյ հիւանդը մի առժամանակ պահում է իր մօտ: Աղօթողները հաւատացնում են, որ հիւանդին տեսնելով՝ նախազգում են աչքով տուած լինելը: Նրանց յօրանջելը սաստիկ գալիս է և ինչ տեղ որ աչքով տուած է աղօթողի նոյն տեղը կարծես վարակւում է և նրանք իրենց այդ մասը անհանդիստ են զգում. օր. եթէ մէջքին է աչքով տուած աղօթողը թեթե ցաւ է զգում մէջքում, և այլն: Եթէ նախազգում են թէ սրտին է աչքով տուած, այլիս չեն աղօթում, որովհետեւ համոզուած են լինում իրենք կարող են դրանից վնասուել և հիւանդին էլ օգուտ տալ չեն կարող: Նիաթը որ սրտին առաւ էլ ազատուելու ճար չկայ:

Աչքով տուածին ասում են և հետեւալ աղօթքը. «Թազա հացի հոտ է գալիս, վերէք տեսէք ով է գալիս, երեք ձիաւոր երեքն էլ կանաչ կապաւոր, մէկը Յիսուս, մէկը Քրիստոս, մէկն էլ Մայր Աստուածածին: Էլան դարով, էջան ձորով, ուր որ կերթան հազար բարով: Դուռը—հիւանդին, բալիսը բարձին, հերթը ծննդկանին, մինչև գալուստ դատաստանին»: Եթէ աչքով տալուց մէկի վրայ վէրքեր են առաջանում, վերցնում են ոչխարի աչք, հինայով շաղախում և քսում վէրքերին:

12. Երեխաներին աչքից ազատ պահելու համար «Որոճ» են կարում վրան, փոքրիկ սպիտակ խսունջ, որ անպատճառ ուղտի վրայից պիտի գողացուած լինի. անասունների վզից նոյն նպատակով փորածոյ տախտակ (դաղդաղան) են կախում, իսկ պարտէզը կամ այգին չար աչքից ազատելու համար շան գանգ են ցցում փայտի ծայրին և տնկում այնտեղ:

13. Եթէ մէկը զգուելուց է հիւանդացի աղօթում են այսպէս. ասում են «Հայր մեր» և յետոյ. «Այստեղից էրուսաղէմ, էրուսաղէմից—Մարու գետ, Մարու գետի մէջ Մարու ծառ, Մարու ծառի վրէժն Մարու բուն, Մարու բնի մէջ Մարու ձու, Մարու ձուի մէջ Մարու ձուտ, անոտ էլաւ, անթիւ էլաւ, փէտէ դանակով մորթուաւ, թէմատա կերուաւ. էրուսաղէմ փրկի ազատի»։ Աղօթողի ձեռին լինում է ասեղ, որը աղօթելու ժամանակ դնում է ջրի մէջ և մատը ասեղին կպցրած պահում. եթէ իրօք հիւանդը զգուանքից է հիւանդացի՝ ասեղը կպչում է մատին։

14. Կանայք, մանաւանդ յղութեան շրջանում, ենթակայ են մի հիւանդութեան, որ կոչւում է «կոխուել»։ «Կոխուում» են նաև տղամարդիկ, բայց շատ քիչ անգամ։ Քնած կամ կիսարթուն ժամանակ հիւանդի աչքին երևում են մարդիկ, սրունք նստում են նրա կրծքին և աշխատում են խեղդել. նա ջանք է անում ազատուել, անդամները շարժել՝ չի կարողանում, փորձում է օգնութիւն կանչել՝ ձայնը դուրս չի գալիս։ Չար գորութեանն են վերադրում այս և սրանից խուսափելու համար կրում են իրենց վերայ կամ «ուծի մատանիք» կամ «դող»։ «Ուծի» մատանիքը, «դողը»—մանեակ կամ ապարանջանը շինում են դարբինները. այս նպատակով լիաւարման» գիշերը դարբինը մուրճով եօթ հարուած է տալիս առանց խօսելու մի կտոր պողպատի և մի ազատ ժամանակ այդ պողպատից շինում է ինչ որ իրեն պատուիրում են այդ երեքից։

15. Երբեմն երեխաները կամ նոյն իսկ մեծերը սկսում են գեղնել և թուլանալ։ Նրանց վզից մի քանի օրով կախում են «Դեղնութեան» կամ «Թրդի» ուլունք, որ մի հազուագիւտ բան է և հիւանդի տէրը մի քանի օր տանը պահելուց յետոյ առանձին վճարով յետ է դարձնում տիրոջը։ Այս հիւանդութիւնը բժշկում են նաև առանց հիւանդի գիտութեան շան սպիտակ աղբը ջրի մէջ լուծելով և խմացնելով։ Երբեմն էլ այս հիւանդութիւնը ունեցող մեծերին բժշկելու համար մէկը անակնկալ ուժեղ ապտակ է տալիս հիւանդին։

16. Երեխաները երբեմն էլ մեծերը եթէ լոյծ են ընկնում և նրանց բերանից միջի փոքրիկ վէրքերի պատճառով ջուր է գնում, ասում են «նորից է առել»։ Հաւատալիք կայ, որ այդ հիւանդութիւնը լուանի ազդեցութիւնից է առաջանում և կապ ունի լուանի ֆագերի հետ։ Այսպիսի հիւանդների «նորը բռնում են», այսինքն իմացող մարդիկ իրենց երկու ձեռների բութ ու ցուցամատերով սեղմում են հիւանդի երկու ձեռների բութ ու ցուցամատերի արանքում եղած փափուկ մսի միջի զարկերակը։ Եթէ հիւանդը երեխայ է տանում են ներկարարի արհեստանոցը, ներկի կարասը խառնում են և երեխային ներշնչել են տալիս նրա հոտը, ներկից

քսում են խաչածն երեսայի ճակատին, քթի տակը, ձեռների մէջը և ոտների տակը, մի երկու կաթիլ էլ խմացնում են: Շատ անգամ այդպիսի հիւանդի «նորը կտրում են» աղօթք մրմնջալով՝ պղնձեայ կամ արծաթեայ թիթեղից կտրում են մկրատով կիսալուսնաձև մի կտոր, ծակում ու կախում են երեսայի վզից: «Նոր կտրող» շատ յաճախ պատահում է քահանաների մէջ: Այս հիւանդութիւնից երեսաներին բժշկելու համար օգտակար է համարում երեքշաբթի և հինգշաբթի երեկոները հաղորդել: Այս հիւանդութիւնից խուսափելու համար երեսայի երեսը լուանում են անմաքուր ամանի ջրով, մի զգուսկի բան է ընկնում ջրի մէջ այդ ջրից խմացնում են, հաւի աղբ ուտացնում կամ չրթունքներին են քսում և այլն:

Բժշկական հաւատալիքների շարքին կարելի է վերաբերել և հետեւեալները.

1. Երբ կատուն մի ամանից ջուր է խմում, նրա աչքերից երկու կաթիլ արտասուք է ընկնում այդ ջրի մէջ. եթէ մէկը սխալմամբ այդ ջրից խմի՝ ջրգողութիւն կստանայ և այդ հիւանդութիւնից էլ կը մեռնի: Ով որ կատուի կերած հացն ուտի կոկորդում սաստիկ քոր կզգայ և հազ կստանայ:

2. Կապոյտ հազ ունեցող երեսաներին բժշկելու համար մոխրակոյտը ծակում են և այդ ծակով երեք անգամ անց են կացնում հիւանդ երեսային:

3. Եթէ մէկը միւսին «չէմքում» կամ «չէքում» է այսինքն վերայով պարկած կամ նստած ժամանակ անցնում է, հաւատում են, որ անցնողի ցաւը ու չոքը կը թափուի միւսի վրայ: Շատերի մէջ այդ հաւատը այնքան զօրեղ է լինում, որ թոյլ չեն տալիս որ և է սիրելի անձնաւորութեան նոյն իսկ մի տեղ դրած չորերի վերայով էլ մէկը անցնի: Սովորաբար անցնողին ստիպում են անցած տեղով յետ դառնալ:

4. Պարնան առաջին որոտը լսելիս իմացողները մէջքները դէմ են անում պատին և ասում. «քո մէջքը երկաթ, իմ մէջքը պողպատ». հաւատում են, որ այսպիսով մէջքը ամուր կը լինի և այլ ևս չի ցաւիլ:

Կենցաղական հաւատալիքները վերաբերում են սակաւ բացառութեամբ կաթնային անտեսութեան: Այսպէս.

1. Խնոցու իւղը շատացնելու համար մեծ պասի առաջին երկուշաբթի օրը տանտիկիները «ճլօրթի են ընկնում». եօթն անգամ ճօճւում են գրկում բռնած մի ծանր քար կամ մի երեսայ և ասում են. «իմ խնոցու իւղը այսքան լինի»: Ճլօրթին միջոց է նաև ցաւ ու չոքը թափելու:

2. Նոյն նպատակով տանտիկիները Համբարձման չորեքշաբ-

թի առաւօտը չուտ անխօս գնում են այդի քաղում ու փնջում են «մէկնուկ», «երկունկ», «երեքնուկ», «չորսնուկ», «հինգնուկ», «վեցնուկ», «եօթնուկ», «օրրի-սրրի» կոչուած խոտի տեսակներէր: Այս փնջի կէսը կապում են խնոցուն, միւս կէսը գցում են կարագի ամանը:

Նոյն օրը աղջիկները գնում են դաշտ, ծաղիկներ են հաւաքում, գիշերը անխօս եօթն առուից ջուր ու մանր քարեր են վերցնում ծածկաբար: Հինգշաբթի օրը այդ ջուրը և քարերը ման են ածում տները, բաժանում տանտիկիններին ու փոխարէնը ստանում կաթ, իւղ, բրինձ, ձու: Տանտիկինները ստացած ջուրը և քարերից եօթ կամ երեք հատ գցում են խնոցու մէջ, իսկ աղջիկները իրենց հաւաքածով Համբարձման օրը խնջոցք են սարքում:

4. Նոյն չորեքշաբթի գիշերը տանտիկինները գնում են ուրիշ կաթնատէրերից եօթն հոգու բամբից (կոռնակ) ցան են հաւաքում ու բերում իրենց կաթի տակը վառում:

5. Նոյն նպատակով նոյն գիշերը տանտիկինները ծածկաբար մտնում մի լաւ կթանաւորով գոմը կիսամերկ, հեծնում կթանին ու ասում երեք անգամ. «քո իւղն ինձ, իմ թանը տիրոջ»:

6. Նոյն գիշերը տանտիկինը հեծնում է անթրոցը—թոնրի կրակը խառնելու փայտը և եօթ կթանատէրերի դուռը պտտում: Ի՞նչ և այսպիսի միջոցներով իւղը շատանում է, բայց կարագը հալելիս պարզ տեսնում են տակին արիւն, որ նշան է թէ ուրիշի արիւն—միասի գնով է շատացել կարագը:

7. Որպէսզի ուրիշ տանտիկինների «ֆէլերին», հմայքների, թիլիսմների աղղեցութեան չենթարկուի իրենց իւղը՝ տանտիկինները գոմի դռնից ալիւրի մաղ են կախում, բակի, տան և գոմի շէմքերին էլ մեկն են խփում Համբարձման չորեքշաբթի օրը:

8. Երբ մէկի կաթը կամ կթանը «նիաթւում է», «աչք է առնում» ու կաթն է պակասում, կամ կթանը հիւանդանում կամ խնոցին հարեկիս փրփուրը կարագ չի դառնում, բժշկելու համար գողանում են աչքով տուռղի տանից մի գդալ, կամ նրա շորի ծլանքներից և վառում են կաթի պղնձի տակ. կամ աչքով տուռղի տանից «մէրան» (մակարդ) են բերում: Եթէ աչքով տուռղը անյայտ է, օձի շապիկ են վառում կաթի տակը կամ եօթն արագիլի բնից վերցրած ցախ:

9. Տանտիկինները երբ գարնանը առաջին անգամ տեսնում են արագիլին, վերցնում են մի մեծ քար և իրենց ուսի վրայով գցելով ասում են. «իմ կարագն էլ այսքան լինի»:

10. Մեծ պասի առաջին երկուշաբթի օրը տանտիկինները գոմի մէջ եօթն փթիւր են թխում, հաւատալով, որ եօթն հորթ կամ ձագ կունենան:

Կենցաղական միւս հաւատալիքները զանազան բովանդակութիւն ունենալէ յայտնաւորուեցաւ:

Խանգարում է ներկարարի ներկի կարասը, ջուր է դառնում, նրան ուղղելու համար տարածում են մի զարմանալի սուտ. երբ մարդկանց մէջ ընդհանրացաւ այդ սուտը և հաւատացին կարասը կուղղուի. Գիւղացիների մէջ սովորութիւն է երբ մի զարմանալի ու դժուար հաւատալի բան են լսում, ասում են. «այդպէս բան չի լինիլ, երեկ ներկի կարաս աւրուած կլինի»:

Եթէ երեխան թաթը ծծի, կամ կատուն խոտ ուտի թանկութիւն կլինի. իսկ եթէ շունն արածայ էժանութիւն:

Եթէ մէկի աջ ձեռքի մէջը ըստ դայ փող կստանայ, եթէ ձախի մէջ—փող դուրս կը տայ, Ոտի տակը քոր դայ ճանապարհ կը գնայ, կատուն երեսը լուսնայ—հիւր կը գայ, կաշաղակը կշկշայ—օտար տեղից տեղեկութիւն կստացուի:

Եթէ մէկը մի բան է ուզում ասել և մի ուրիշը կանխում է նրան, կանխողը առաջինից շատ կապրի:

Երբ առաջին անգամ լսում է «աղաղակի» կոռոյր, տանտիկիներ ձայն է տալիս «քանի, քանի», քանի որ պատասխանեն այնքան թուխս կունենայ տանտիկիներ:

Թուխս ունեցողը եթէ ձուի կճկալը կրակը գցի—ճտերը ձուերի մէջ կը խեղդուեն: Եփած ձուն եթէ տաք տաք գցեն սառը ջրի մէջ հաւը ձուից կը կտրուի: Եթէ թուխս դնողի փէշերը յետից քշտած լինեն—գուրս եկած ճուտերը անպոչ կը լինեն:

Երբ զարնանը առաջին անգամ ձմրուայ կապած տաւարը գուրս են հանում գոմից, արօրի խոփը գնում են գոմի շէմքին, մի կոյս աղջիկ կանգնած է լինում գոմի դրան գլխին տաւարը գուրս գալիս գարի է շաղ տալիս նրանց մէջքին, իսկ մի ուրիշը հում ձու է խփելով փշրում տաւարի ճակատին:

Բամբակի հունտը ցանելու տանելիս հետը խառնում են տեառընդառաջի կրակի մոխրից: Նոյն մոխրից գցում են նաև հաւարունը, որ հաւերը շուտ ձուի գան:

Յոպոպի առաջին անգամ տեսնելիս եօթն անգամ պտտում են մի ոտի վրայ, կրնէի տեղից մի բուռ հող են վերցնում, գիշերը անցնելուց յետոյ միւս առաւօտեան այդ հողի մէջ որոնում են մագ. եթէ գտած մաղը սև է, գտնողը կամ ում մասին որ հող վերցվողը մտադրել է երիտասարդ հասակում կը մեռնի. եթէ սպիտակ է, ծերացած ժամանակ, իսկ եթէ կէսը սպիտակ է կէսը սևալիսառը ժամանակ:

Կրօնական հաւատալիքներից նշանաւոր են նրանք, որ վերաբերում են կիրակին որոշելուն կամ նրա նշանակութիւնը պարզելուն: Պէտք է նկատել, որ կիրակի ասելով հասկանում են մի

առանձնայատուկ սրբի, որ իզական սեփոյն է, պատուին պահած օրս եւ կիրակի խօսքը նշանակում է և այն սրբի անունը և հանգրստութեան համար նշանակուած օրս Նոյն մտքով հասկացուում է նաև «չորեքշաբթամուտ» և «ուրբաթամուտ» խօսքերը, երբ կանայք նոյնպէս կիրակի ևն համարում, միայն սրանք արական սեփոյ սրբեր ևն համարւում կիրակի պահելը աւելի ամուր պահւում է իզական սեփոյ մէջ, որոնք համոզուած են թէ այդ օրերը ասեղ, մկրատ, կամ այլ գործիք քանեցնելով ֆիզիքական տանջանք ևն պատճառում այդ սրբերին, Հաւատալիք կայ, որ կանանցից նրանք, որոնք հաւատարմութեամբ պահել ևն չորեքշաբթամուտը, ուրբաթամուտը և կիրակնամուտը իրենց ծննդեան դժուարին ու անօգնական օրերում յիշեալ սրբերը աներևութապէս խնամում ևն նրանց:

Հայի իսկական կիրակին դտնելու համար վերցնում են 40 սեփոտուր ցցում ևն մի դադանի տեղում մի պատի վրայ առանց խօսելու Ամեն օր անխօս դնում ևն և նայում փետուրներին, իսկ չարաթական մի հատ դուրս ևն զցում: Այն օրը երբ այդ փետուրներից մէկն ու մէկը սպիտակ դառնայ կը լինի հայի իսկական կիրակին:

Մեծ պատի առաջին չարաթուայ երկուշաբթին համարւում է «մկան» կիրակի, այդ օրը նուիրուած է, որ մուկը մեծա չտայ, ուրիշ խօսքով ի պատիւ ս. կիրակիի այդ օրն պահում ևն, որ նա մկներին արգելք լինի մեծանելու մարդկանց: Երեքշաբթի պահում ևն կատաղած շան համար. չորեքշաբթի—կաթակի, չարաթ օրը կոչւում է «թալալոց» կիրակի. այդ օրը երեսայ ունեցող մայրերը խստութեամբ պահում ևն, որ իրենց երեխաները «չթալցնեն»—ուշագնաց չլինեն:

Մեծ պատի երկրորդ չարաթուայ երկուշաբթի օրը շատերի կարծիքով հայի ամենախիտ կիրակին է, որ եթէ պահեն նրանց ոչ մի բան չխղակատիւ: Այս կիրակիի մասին միտք ներշնչել ևն հրէաները: Ով այդ կիրակիի մասին խօսք է բաց անում, աւելացնում է որ «ջուղներն ևն ասում»:

Մարտ ամսի մէջ պատահող առաջին չորեքշաբթին համարւում է խիտ կիրակի. այդ օրերը պահում ևն զլիաւորապէս տաւարատէրերը—զանազան համաճարակներից ազատելու համար և կոչւում է «Ագարի» կիրակի:

Սիստ կիրակի է համարւում չիք—չորեքշաբթի օր—աւագ չորեքշաբթին: Ընդունում ևն, որ այդ օրը ինչ բանի ձեռք տան չիք կը դառնայ, անհետ կը կորչի. ուստի զբաղւում ևն տան անմաքրութիւնները մաքրելով: Նոյն օրը քաջախով եփում ևն մի եսասկ կերակուր, որ կոչւում է «օձի թթու». ով որ այդ կերակրից ուտի

օձը այլ ևս նրան չի կծիր։ Այդ կերակրից լցնում են տան մէջ այն տեղերը ուր օձ է երևացել, որ էլ օձ չերևայ։

Զատիկից մինչև համբարձում երեկոյեան ժամից յետոյ կիրակի է համարւում, երեկ եկեղեցում «կեցո» ասելու հետ են կապում, և կոչւում է «հաւկուր»։ Ով ով այդ կիրակիները չպահի, հաւկուր կը լինի. այսինքն արեւ մտնելուց յետոյ այլ ևս չի տեսնիլ։

Կրօնական հաւատալիքներից մի քանիսը կապուած են քրիստոնէական տօների հետ։ Այսպէս.

Ս. Սարգսի պատին սապոն բանացնել չի կարելի, առաջին երեք օրերը «միաժում» են պահում, չորեքշաբթի օրը փոխինդ են շինում և դնում ծալքաթուղը, հաւատում են որ ս. Սարգսի ձին անցնելիս պայտը հետք է թողնում փոխինդի վրայ։ Ուրբաթ օրը աղաբլիթ են ուտում և առանց ջուր խմելու պարկում ջահիլ աղջիկները և երազին տեսնում են իրենց ապագայ նշանածին, որի ձեռից ջուր են ընդունում։ Երբ ուտում են աղաբլիթը առաջին պատառի կէսը կծում են միւս կէսը դնում մի բաց տեղ և դիտում թէ ագռաւը ում կտուրն է տանում կամ որ կողմը՝ ըստ այնմ էլ որոշում են թէ ով է լինելու իրենց ապագայ նշանածը։ Իսկ սապոն չեն բանացնում այն անմիտ ենթադրութեամբ, որ ս. Սարգիսի ձիու ոտերը սոթ չտայ։

Միջինքին թիում են մէջը մի փոքրիկ դրամ թաղցրած բաղարջ. առաջիկայ չաբաթ օրը տան անդամների վերայ բաժանում են, տան անդամ հաշուելով նաև շանը, կատուին, գոմը և տաւարը. ում բաժնի մէջ որ փողը դուրս է գալիս նրան ևս համարում տան յաջողութիւնների պատճառը։

Աւագ հինգշաբթի օրը ձու են եփում, որը համարւում է զեզ «ղօլինջի» դէմ. և թաթախման չաբաթ երեկոյեան այդ ձուերով են պատր բաց անում։ Դօլինջը այն է որ մրսելուց մէջքի մկանւորները կծկւում են և հիւանդի անդամները չարժելիս սաստիկ ցաւ է զգում մէջքում։

Սակայն քրիստոնէական տօներից ամենից շատ Համբարձման հետ է ժողովուրդը կապում յուսալի կենսական հաւատալիքներ։ Համբարձումը գարնան ամենալաւ ժամանակն է լինում, բնութեան կենսարար պայմանների յաղթանակի ամենափայլուն ժամանակամիջոցին։ Բացի զուտ կենցաղական—գլխաւորապէս կաթնային տնտեսութեան վերաբերեալներից Համբարձման հետ կապւում են մի քանի կրօնական—կենսական հաւատալիքներ, որոնք համապատասխանում են մանաւանդ երիտասարդութեան ամենավառ սպասելիքներին։

Համբարձման չորեքշաբթի օրը կանայք ու աղջիկները երե-

կոյեան միմեզով այգիներն են գնում և իրենց ու իրենց սիրելիներէ անունը տալով գետնից դէպի բարձր մի թիղ չափում են որեւէ մի խոտարոյսի վրայ ու այնտեղ մի նշան են կապում. Հինդւարթի առաւօտեան անխօս գնում են իրենց նշանները նորից չափում, եթէ չափը մեծացած է լինում գիշերը—ուրեմն այդ նշանի տէրը երկար կեանք կունենայ. իսկ եթէ ընդհակառակն՝ կարճ կեանք, թէև սիրելիների կեանքի երկարութիւնը շատ է հետաքրքրում նրանց, բայց խոտերի վրայ այդ մտքով նշան անում են հոգու մի առանձին տանջանքով, որովհետև հաւատում են, որ այդ գիշեր քոյր բոյսերը ողջունում և սիրոյ համբոյրով գրկախառնում են միմեանց հետ, բացի նշանած բոյսերից:

Նոյն գիշերը արժանաւոր մարդիկ ինչ մտադրութիւն որ ունենան կատարելու, խոստումն կատանան եթէ մի հայելի դնեն առաջները և անակնթարթ երկար ժամանակ նայեն հայելու մէջ. նրանց աչքին իբր թէ երևում են ծառեր, լեռներ և ամեն կերպարանքի կենդանիներ ու մարդիկ. եթէ նայողը կարողանայ մինչև վերջը նայել՝ նրա աչքին կերևայ մի մարդ, որ կասի նրան երեք անգամ. «Ուզի, ուզածդ տամ»: Առաւել մեծ արժանաւորութեան տէր մարդիկ հէնց էնպէս առանց երկար նայելու, եթէ պատահմամբ այդ գիշեր աչքը հայելուն են դրում, տեսնում են խոստումներ անող անձին:

Կրօնական հաւատալիքների մէջ կարևոր տեղ են բռնում չար դորութեան—սատանաներին վերաբերողները: Հաւատում են, որ չար ոգիները գլխաւորապէս իգական սեռին են պատկանում և բազմանում են մարդկանց հետ միաւորուելով գիշերը սրանց քնած ժամանակ, սորանից էլ առաջացել է «Սատանախար» խօսքը: Այդ չար ոգիները կամ սատանաները սովորութիւն ունեն գողանալու կանանց պահեստի թանկագին շորերը և տանել ու կեղտոտել: Ենթադրում են, որ այդ շորերը տանում են չար ոգիները և ևրեխայ բերելուց յետոյ իրենց մաքրում են: Շատ անգամ պատահել է, որ մի տանտիկին խնամքով դարսել է անդուկի մէջ իր բոլորովին մաքուր շորերը, մի քանի ամսից յետոյ երբ պէտք են եկել շորերը հանել է ու տեսել, որ մի քանի տեղ արնաջրի կեղտոտ բծեր կան: Այդ բանից խուսափելու համար սովորաբար ասեղ են ցցում շորի վրայ դարձած տեղը, որից երկիւղ է կրում սատանան: Պատմում են իբր թէ մի մարդ գիշերը բաճ ուսին դնում է ջուր անելու, հետո հին ջրաղացի աւերակների մօտ տեսնում է կրակ. մօտենում կրակին, տեսնում է մի խումբ անձանց թիկնաք ձեռք ձեռքի տուած պարում են, մօտենում է և նկատում, որ նրանց հագի շորերից շատերը ծանօթ են. ստուգելու համար ձեռքի պապիրոսի կրակով այրում է մի քանիսի փէշերը աննկատելի:

կերպով ն միւս օրը ստուգում է, որ իսկապէս իր հարեաններից մի քանիսի պահեստական չորերն է եղել այրուած նշանը վրաները:

Չար ոգիները սիրում են չարչարել ձիերին և մանաւանդ հիւսել նրանց բաշի մազերը: Խորամանկ մարդիկ ձիու մէջքին կուպր են քսել և սատանան միամտաբար նստել ու կպել է ձիուն. իսկ երբ կպչում է այլ ևս աներևոյթանալ չի կարող: Իսկոյն ասեղ են խրել նրա մարմնի մէջ և բռնել են ու ծառայացրել: Ծառայութեան միջոցին լսած հրամանները միշտ հակառակն է հասկանում: Ասում են «գնա», նա մօտենում է, չուտը ու է հասկանում. վատը լաւ է հասկանում: Ասեղից ազատուել է և աներևոյթացել խոտանալով որ տան տիրոջ եօթը պորտին չի դիպչի: Հաւատացած են, որ սատանան աներևութապէս միշտ հետևում է մարդկանց և աշխատում է մի փորձանքի մէջ պցել մանաւանդ մութ գիշերները, աւերակների մէջ, ջրաղացներում, մեծ ջրերի ափերին, հին ծառերի տակ: Առհաստակ երբ խօսք է լինում մի անակնկալ փորձանքի կամ անհասկանալի հիւանդութեան մասին, չեն մոռանում ասել «Սատանայի ականջը խուլ»: Հաւատալով որ սատանան պատրաստ կանգնած է մնասելու միայն ակնարկի կամ յարմարութեան է սպասում:

Չար ոգիները բացի հագնելուց և զուարճանալուց նաև ուտում են և խմում: Նրանք իսկոյն իրենց տրամադրութեան տակ են գնում այն ամենը, ինչ որ ունեցողը ուզողին չի տալիս ասելով «չկայ»: Պէտք է ասել կամ «Աստուած տայ» կամ «չեմ տալիս»: Այս հաւատով տանտիկիները աղ, հաց, իւղ, պանիր և այլն հանելիս միշտ ասում են «Յիսուս, Քրիստոս, դու չարը տանես բարին քերես»:

Կայծակի և փայլակի մէջ ևս չար զօրութեան ներկայութիւնն են տեսնում և փայլակն երեալիս խաշակնքում ու «Յիսուս, Քրիստոս» են ասում:


Հրաշալի այլաբանութիւն է այն, որ որտեղ գրիչ ու թանաք կայ, սատանան այնտեղից հեռու է ման դալիս. վախենում է ասեղից, դանակից և առհասարակ պողպատեայ գործիքներից: Եղիտների մասին պատմում են, որ նրանք ստտանայ են պաշտում, որին չվիրաւորելու համար խուսափում են կրկաթէ գործիքներից, մինչև անգամ նրանց չէյսի մասին հաւատացնում են, որ մինչև այժմ էլ փայտէ խռի է յարմարեցնում իր արօրին. հաւատալով, որ գործելով երկաթէ գործիքով ուղղակի սատանայի աչքն է հանում:

Գրի անցրած հաւատալիքները ամբողջութեան մի փոքր մասն են կազմում, բայց բացի հաւատալիքներից և սնտրապաշտութիւններից տասնեակ մանր մուշր բաներ, ինչպէս խէր ու շառ պցելն

է համոզիչի վրայ, սարբն ու ջահար, աչքերի սառելը, մարմնի զանազան մասերի խաղալը, երազը ու իր հազար ու մի կերպ մեկնութիւնները, ֆալշիւները, ռամզարները, զրբացները, կանոնաւոր հալածանքի չենթարկուելով կեանքը լցնում են սուտ բովանդակութեամբ իսկ խեղճ գիւղացիների սիրտն ու հոգին սուտ երկիւղով և հոգեմաշ կասկածներով ... ո՞վ պէտք է կուռի և դուրս մզի ժողովրդի հոգուց այս ամենը, ո՞ւմ վերայ է ծանրանում այս պատասխանատուութիւնը ... բայց տարաբաղդաբար հէնց մեր շարքում կան այսպիսի գրութեան ջատագովներ և նրանից լուկիայն օգտուողներ:

28 ապրիլի 1909 թ. Շահրէար

Սմբատ Բ. Սարգսեան



Պ Ղ Ա Տ Ո Ն

Կ Ր Ի Տ Ո Ն *)

Սոկրատէս եւ Կրիսոն

1. Սոկրատէս—Ինչո՞ւ այդպէս վաղ ես եկել, ո՞վ Կրիսոն. թէ վաղ չէ:

Կրիսոն—Շատ վաղ է,

Սոկրատէս—Ինչքան վաղ է:

Կրիսոն—Դեռ նոր է լուսանում:

Սոկրատէս—Չարմանում եմ ի՞նչպէս բանտի պահապանը համաձայնել է քեզ ներս թողնել:

Կրիսոն—Նա ինձ արգէն ճանաչում է, ո՞վ Սոկրատէս, և բացի այդ ինձանից լաւութիւն է տեսել:

Սոկրատէս—Բայց դու նոր ես եկել, թէ վաղուց է այստեղ ես:

Չեւբիս տակ ունեցել եմ ռուսերէն թարգմանութիւնը և լուսարանութիւնները: